600.0137.25.04.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

25 ապրիլի 2018 թվականի №137Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի №283Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՖԻՐՄԱ Գ.Ա.Խ.» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2018 թվականի ապրիլի 19-ին «ՖԻՐՄԱ Գ. Ա. Խ. » սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով մեկ տարով երկարաձգել Հանձնաժողովի 2007 թվականի հունիսի 22-ի №283Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0252 լիցենզիայով (այսուհետ՝ №0252 լիցենզիա) ամրագրված վերակառուցման ժամանակահատվածը,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի համաձայն՝ լիցենզիայում ամրագրված ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման համար լիցենզավորված անձը լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) ավարտից ոչ շուտ, քան 3 ամիս, և ոչ ուշ, քան 15 աշխատանքային օր առաջ հայտով դիմում է Հանձնաժողով՝ նշելով հայցվող ժամկետը, մինչդեռ Ընկերությունը հայտը ներկայացրել է 4 աշխատանքային օր առաջ,

գ) Հանձնաժողովը 2018 թվականի ապրիլի 20-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 32-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարույթի շրջանակում Ընկերությունը 2018 թվականի ապրիլի 20-ի գրությամբ կատարված խախտումը պատճառաբանել է որպես Կարգի չիմացության հետևանք,

ե) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կարգի 32-րդ կետի պահանջը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, 42-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը, 2-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, և Կարգը, այդ թվում՝ Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Մեկ տարի ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2007 թվականի հունիսի 22-ի «ՖԻՐՄԱ Գ. Ա. Խ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Գետափ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №283Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0252 լիցենզիայով ամրագրված վերակառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2018 թվականի ապրիլի 26-ը» բառերը փոխարինելով «մինչև 2019 թվականի ապրիլի 26-ը» բառերով:

2. Ընկերությանը՝ №0252 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Գետափ» փոքր հիդրոէլեկտրակայանի վերակառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

   1) մեկամսյա ժամկետում «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի մարտի 23-ի O.AB.100.11CB.ESC.4.1169.17 գրությամբ ներկայացված երաշխիքի համաձայն երաշխավորված վեց միլիոն ինը հարյուր հազար դրամ գումարից երեք միլիոն չորս հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր հիսուն դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել վեց միլիոն ութ հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2019 թվականի հունիսի 10-ը գործողության ժամկետով:

3. Կարգի 32-րդ կետի պահանջի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:

4. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի ապրիլի 26-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
25 ապրիլի 2018թ.